ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 091407836, Էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

15.08.2018թ.

ՀՀ Էներգետիկ ենթակառուցվածքների
և բնական պաշարների նախարար
Արթուր Գրիգորյանին

337-ի 6

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Գրիգորյան,

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածներով և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք Ինֆորմացիայի ազատության կենտրոնին տրամադրել հետևյալ տեղեկությունները.

1. 2017թ. և 2018թ.-ին ՀՀ Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարությունը ո՞ր հասարակական կազմակերպություններին է տրամադրել դրամաշնորհներ և/կամ սուբսիդիաներ:
2. 2017թ. և 2018թ.-ին ՀՀ Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների ներդրումների նախարարության կողմից հասարակական կազմակերպություններին տրամադրված դրամաշնորհներից և/կամ սուբսիդիաներից յուրաքանչյուրի նպատակը և հատկացված գումարի չափը:

Խնդրում ենք տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխանել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված 5-օրյա ժամկետում:

Հարգանքով՝

ԻԱԿ նախագահ
Շուշան Դոյդոյան